Հայաստանի տնտեսական հեռանկար

Հունվար-մարտ 2024



ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) 2024թ. հունվար-մարտին կազմել է **14.3%**:

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2024 թվականի հունվար-մարտին կազմել է **1,971.2 մլրդ դրամ**՝ աճելով **9.2%**-ով:

ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով կազմել է **1,621 ԱՄՆ դոլար**՝ աճելով **6.0%**-ով:

Ցուցանիշների աճ
(նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ)

Արտահանում	+170%
Ներմուծում	+76%
Զբոսաշրջիկների ներհոսք	-3.2%
Միջին աշխատավարձ	+8.1%
Ծառայություններ	+5.0%
Ներքին առևտուր	+26.5 %

Հիմնական տնտեսական ցուցանիշներ

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ
2024թ. հունվար-մարտ՝ աճողական



Գծապատկեր 2. Աճն ըստ ոլորտների
2024 թ. հունվար-մարտ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ



Տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) 2024 թվականի առաջին եռամսյակում կայուն աճել է: ՏԱՑ-ը 2024 թվականի հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կազմել է **14.3%**:

- **Արդյունաբերություն:** Ծավալը 2024 թվականի հունվար-մարտին կազմել է **723,685 մլն դրամ՝** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով **30.4%-ով:** Հիմնական արտադրանքը, որը դրական ազդեցություն է ունեցել արդյունաբերության աճի վրա, մշակվող արդյունաբերությունն է, որի աճը կազմել է 47.6%: Արդյունաբերության աճի վրա բացասական ազդեցություն է ունեցել «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»-ը, որի կրճատումը կազմել է -4.6%:

- **Շինարարություն:** Ծավալը 2024 թվականի հունվար-մարտին կազմել է **72,195 մլն դրամ՝** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով **11.7%**-ով: Շինարարության ծավալի աճին նպաստող ֆինանսավորման հիմնական աղբյուրը մարդասիրական օգնության միջոցներն են, որի աճը կազմել է 33.3%:

- **Առևտուր:** Ներքին ապրանքաշրջանառության ծավալը 2024 թվականի հունվար-մարտին կազմել է **1,238,169 մլն դրամ՝** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով **26.5**%-ով:

- **Ծառայություններ:** Ծավալը 2024 թվականի հունվար-մարտին կազմել է **745,591** մլն դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով **5.0%**-ով: Ծառայությունների ծավալի աճին նպաստող հիմնական ենթաճյուղերն են՝ «ֆինանսական և ապահովագրական գործունեությունը»՝ աճը 19.5%, «մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեությունը»՝ աճը 13.5%: Ծառայությունների ծավալի աճի վրա բացասական է ազդել «տրանսպորտ» ծառայության տեսակը, որը կրճատվել է -17.1%-ով:

Զբոսաշրջություն

Գծապատկեր 3. Միջազգային զբոսաշրջիկների ժամանումներ
(հազար)



Գծապատկեր 4. Ռուսաստանից զբոսաշրջիկների քանակ



Զբոսաշրջության դինամիկա (2023-2024թթ. 1-ին եռամսյակում)

- 2023 թվականին Հայաստանում զբոսաշրջիկների թիվը նախորդ տարիների համեմատ կտրուկ աճել է, սակայն 2024 թվականի առաջին եռամսյակում **զբոսաշրջիկների թիվը փոքր-ինչ նվազել է:**

- 2024 թվականի հունվար-մարտին զբոսաշրջիկների թիվը հասել է **436,0 հազարի**՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով **3.2%**-ով:

- 2024 թվականի առաջին եռամսյակում Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին բաժին է ընկել բոլոր մուտքերի **42%**-ը: 2023 թվականի նույն ժամանակահատվածում Ռուսաստանից ժամանած զբոսաշրջիկներին բաժին է ընկել բոլոր մուտքերի 52%-ը:

- Ժամանողների ընդհանուր թվի փոքր նվազումը պայմանավորված է առաջին հերթին Ռուսաստանից ժամանողների թվի կրճատմամբ, որոնք ամենամեծ մասնաբաժին են կազմում:

Զբոսաշրջություն



Ժամանումներ ըստ երկրի
Հունվար-մարտ 2024

Երկիր	Զբոսաշրջիկներ	S/S համեմատ
Ռուսաստան	184,317	-21.9%
Վրաստան	61,830	15.5%
Իրան	33,729	32.6%
Հնդկաստան	13,216	2.7 անգամ
Ֆիլիպիններ	9,417	57.6%
Ուկրաինա	5,542	-3.4%
ԱՄՆ	4,942	4.8%
Գերմանիա	3,649	28.7%
Ֆրանսիա	3,501	19.8%
Բելառուս	3,124	-9.0%

Միջազգային առևտուր – արտահանում

Գծապատկեր 5. Ապրանքների արտահանում
հունվար-մարտ (միլիոն դոլար ԱՄՆ)



Գծապատկեր 6. Արտահանում ըստ ապրանքների – առաջին 10
2024թ. հունվար-մարտ, մլն ԱՄՆ դոլար



Արտահանումը 2024 թվականի հունվար-մարտին կազմել է **4,422.8 մլն ԱՄՆ դոլար**՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճը կազմել է 2,795.9 մլն ԱՄՆ դոլար, կամ **2.7 անգամ**:

2024 թվականի հունվար-մարտի արտահանման աճին նպաստող հիմնական ապրանքները՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

- **Չմշակված կամ կիսամշակված ոսկի, փոշի՝** 2,511.2 մլն ԱՄՆ դոլար աճել է 12.78 անգամ:
- **Ոսկերչական իրեր՝** 432.5 մլն ԱՄՆ դոլար, աճել է 27 անգամ:
- **Հեռախոսային և հեռագրական սարքավորումներ, մոդեմ, պահեստամասեր՝** 220 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 2.7 անգամ:
- **Ադամանդե քար՝** 185.8 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 57%:
- **Երկաթամիահալվածք՝** 119.2 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 24%:

2024 թվականի առաջին եռամսյակում վերոնշյալ հինգ ապրանքատեսակներին բաժին է ընկնում արտահանման ընդհանուր ծավալի 78%-ը, մինչդեռ չմշակված կամ կիսամշակված ոսկի, փոշի» ապրանքատեսակին բաժին է ընկնում արտահանման ընդհանուր ծավալի 56%-ը:
Կարևոր է նշել, որ առաջին եռամսյակում արտահանված գրեթե ամբողջ ոսկին (99,9%) եղել է ոչ հայկական ծագումով (վերաարտահանում):

Միջազգային առևտուր - արտահանում

Գծապատկեր 7. Արտահանման ծավալն ըստ երկրների
2024թ. հունվար-մարտ (մլն ԱՄՆ դոլար)



2024 թվականի հունվար-մարտին ըստ արտահանման հիմնական առևտրային գործընկերներն են՝

- **Արաբական Միացյալ Էմիրություններ,** որին բաժին է ընկնում ընդհանուր արտահանման ծավալի 46%-ը՝ 2,053.2 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 7.1 անգամ:
- **Ռուսաստան,** որին բաժին է ընկնում ընդհանուր արտահանման ծավալի 16.4%-ը՝ 724.0 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվել է 9%-ով:
- **Հոնկոնգ,** որին բաժին է ընկնում ընդհանուր արտահանման ծավալի 16.3%-ը՝ 720.8 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 36 անգամ:
- **Չինաստան,** որին բաժին է ընկնում ընդհանուր արտահանման ծավալի 12.3%-ը՝ 543.1 մլն ԱՄՆ դոլար: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 5.9 անգամ:

Միասին վերցրած՝ վերոնշյալ 4 երկրների հետ առևտուրը կազմում է Հայաստանի արտահանման ընդհանուր ծավալի 91%-ը:

Միջազգային առևտուր - ներմուծում

Գծապատկեր 8. Ապրանքների ներմուծում
2024թ. հունվար-մարտ (մլն ԱՄՆ դոլար)



Գծապատկեր 9. Ներմուծում ըստ ապրանքների – առաջին 10
2024թ. հունվար-մարտ (մլն ԱՄՆ դոլար)



Ներմուծումը 2024 թվականի հունվար-մարտին կազմել է **4,746.9 մլն ԱՄՆ դոլար**՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճը կազմել է 2,046.5 մլն ԱՄՆ դոլար կամ **76%**:

2024 թվականի հունվար-մարտի ներմուծման աճին նպաստող հիմնական ապրանքները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

- **Չմշակված կամ կիսամշակված ոսկի, փոշի՝** 2,222.6 մլն ԱՄՆ դոլար, աճել է 13.5 անգամ:
- **Հեռախոսային և հեռագրական սարքավորումներ, մոդեմ, պահեստամասեր՝** 264.0 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ **52.2%**:
- **Ադամանդե քար՝** 222.0 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ **89.4%**:
- **Բնական և հեղուկ գազ՝** 174.4 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ **3.7%**:
- **Ավտոմեքենա մարդատար՝** 119.6 մլն ԱՄՆ դոլար, կրճատումը՝ **-65.9%**:
- **Նավթ և նավթամթերք՝** 118.0 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ **10.7%**:

2024 թվականի առաջին եռամսյակում վերը նշված վեց ապրանքները միասին կազմել են ընդհանուր ներմուծման 65%-ը, մինչդեռ միայն **«չմշակված կամ կիսամշակված ոսկի, փոշի»** ապրանքատեսակին կազմել է ընդհանուր ներմուծման 46%-ը:

Միջազգային առևտուր - ներմուծում

Գծապատկեր 10. Ներմուծման ծավալն ըստ երկրների
2024թ. հունվար-մարտ (մլն ԱՄՆ դոլար)



2024 թվականի հունվար-մարտի հիմնական առևտրային գործընկերները ըստ ներմուծման եղել են՝

- **Ռուսաստան,** որին բաժին է ընկնում **ընդհանուր ներմուծման ծավալի 64%-ը**, ծավալը կազմել է 3,077.3 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 4 անգամ:
- **Չինաստան,** որին բաժին է ընկնում ընդհանուր **ներմուծման ծավալի 4%-ը**, ծավալը կազմել է 192.3 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 13.2%:
- **Վրաստան,** որին բաժին է ընկնում **ընդհանուր ներմուծման ծավալի 3.3%**-ը, ծավալը կազմել է 157.2 մլն ԱՄՆ դոլար, աճը 30.6%:
- **Արաբական Միացյալ Էմիրություններ,** որին բաժին է ընկնում **ընդհանուր ներմուծման ծավալի 2.8%-ը**, ծավալը կազմել է 136.8 մլն ԱՄՆ դոլար, կրճատումը -0.79%:

Միասին վերցրած՝ վերոնշյալ 4 երկրների հետ առևտուրը կազմում է Հայաստանի ներմուծման ընդհանուր ծավալի 74%-ը:

Աշխատանքի շուկա. Ֆորմալ զբաղվածություն

Գծապատկեր 11. Ֆորմալ զբաղվածություն
(հազար)



Գծապատկեր 12. Պաշտոնական զբաղվածություն, առաջատար ոլորտներ
(հազար)



Ֆորմալ զբաղվածությունը 2024 թվականի մարտին կազմել է **741.6 հազար մարդ՝** 2023 թվականի մարտի համեմատ աճելով 35 հազարով, կամ **5.2%**-ով:

2024 թվականի մարտի ըստ զբաղվածության երեք առաջատար ոլորտներն են.

- **Մեծածախ և մանրածախ առևտուր՝** ընդհանուր աշխատուժի 17%-ը,
- **Կրթություն՝** ընդհանուր աշխատուժի 16.7%-ը,
- **Արտադրություն՝** ընդհանուր աշխատուժի 11.0%-ը:

2023 թվականի մարտի համեմատ զբաղվածության աճ է գրանցվել գրեթե բոլոր ճյուղերում: Որպես օրինակներ՝

- **Շինարարություն՝** աճը կազմել է **15.0%՝** հասնելով 33.5 հազարի,
- **Ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝** աճը կազմել է **8.5%՝** հասնելով 23.3 հազարի,
- **Այլ ծառայություններ՝** աճը կազմել է **22%՝** հասնելով 29.7 հազարի:

Պետական կառավարում ու պաշտպանությունը միակ ոլորտն է, որտեղ տեղի է ունեցել զբաղվածների թվի նվազում՝ կրճատվելով **2.7%**-ով:

Աշխատանքի շուկա. աշխատավարձ

Գծապատկեր 13. Աշխատավարձերն ըստ ոլորտների, միջին
2024թ. մարտ (հազար ՀՀ դրամ)



Գծապատկեր 14. Աշխատավարձերի աճ ըստ ոլորտների
2024թ. մարտ, %



Միջին ամսական աշխատավարձը 2024 թվականի մարտին կազմել է **307,655 դրամ**, որը 2023 թվականի մարտի համեմատ աճել է **8.1%**-ով:

Պետական հատվածում միջին աշխատավարձը 2024 թվականի մարտին կազմել է **213,443 դրամ,** աճը՝ 9.6%, մասնավոր հատվածում՝ **345,621 դրամ,** աճը՝ 7.3%:

Արտարժույթով միջին ամսական աշխատավարձը 2024 թվականի մարտին կազմել է **768 ԱՄՆ** դոլար, կամ **707 եվրո**:

2024 թվականի մարտին 3 ամենաբարձր վարձատրվող ոլորտներն են՝

- **Ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝** 1,797,900 դրամ
- **Տեղեկատվություն և կապ՝** 869,800 դրամ
- **Պետական կառավարում և պաշտպանություն՝** 364,100 դրամ:

Աճի ամենաբարձր տեմպերն ունեն հետևյալ ոլորտները.

- **Ֆինանսական և ապահովագրական գործունեություն՝ +39.4%**
- **Պետական կառավարում և պաշտպանություն՝ +12.9%**
- **Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն՝ +12.3%**

Դրամական փոխանցումներ և փոխարժեք

Գծապատկեր 15. Դրամական փոխանցումներ և USD/AMD փոխարժեք



Գծապատկեր 16. Փոխանցումների ներհոսք ըստ երկրի

մլն ԱՄՆ դոլար



Գծապատկեր 17: ՀՆԱ-ի աճի կանխատեսումներ ԱՄՆ-ի և Ռուսաստանի համար

%



Դրամական փոխանցումների ընդհանուր ներհոսքը 2024 թվականի հունվար-մարտ ամիսներին կազմել է **1,214.8 մլն ԱՄՆ դոլար**՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով **23.2%**-ով:

Դրամական փոխանցումների զուտ ներհոսքը 2024 թվականի հունվար-մարտին կազմել է **278.6 մլն ԱՄՆ դոլար**՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կրճատվելով **49.6%**-ով:

Դրամական փոխանցումների մեծ մասը ստացվել են 2 երկրներից, որոնց բաժին է ընկնում ընդհանուր ներհոսքի 78.7%-ը.

- **Ռուսաստան՝** 794.9 մլն ԱՄՆ դոլար, **-16%** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:
- **Միացյալ Նահանգներ՝** 161.1 միլիոն ԱՄՆ դոլար, **+12%** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Ըստ ԱՄՀ-ի տնտեսական կանխատեսումների 2024 թվականին ԱՄՆ -ում և Ռուսաստանում տնտեսական աճը կկազմի համապատասխանաբար 2.7% և 3.2%, իսկ 2025 թվականին՝ համապատասխանաբար 1.9% և 1.8%:

ԱՄՆ ՀՆԱ-ի դանդաղ աճը չի ազդել դրամական փոխանցումների տեմպերի վրա, քանի որ մենք կարող ենք տեսնել դրամական միջոցների ներհոսքի աճ: Սակայն Ռուսաստանից դրամական փոխանցումների ներհոսքը վերջին 2 տարվա ընթացքում առաջին անգամ կրճատվել է: Դա, հավանաբար, պայմանավորված է դանդաղ մարող աշխարհաքաղաքական ցնցումներով:

Գնաճը Հայաստանում և աշխարհում



Գծապատկեր 18. Գնաճի մակարդակ 2024թ. մարտին
տարեկան տոկոսային փոփոխություն



Գնաճը շարունակում է մտահոգիչ մնալ աշխարհի շատ երկրներում, չնայած, այն կարծես ցույց է տալիս նվազման միտում նախորդ տարվա համեմատ: 2024 թվականի առաջին եռամսյակում Հայաստանում գնաճը շարունակում է ցածր մնալ:

2024 թվականի մարտի համաշխարհային գնաճի որոշ տվյալներ՝

- **Աշխարհ** (159 երկիր)՝ **8.9%**
- **Ասիա** (39 երկիր)՝ **6.4%**
- **Եվրոպա** (44 Երկիր)՝ **4.6%**
- **Հայաստան՝ -1.2%**

Գծապատկեր 18-ից երևում է, որ Հայաստանը տարածաշրջանում ամենացածր գնաճն ունի:

Քանի որ Հայաստանը մտել է գնանկման փուլ, ՀՀ Կենտրոնական բանկը 2024 թվականի 1-ին եռամսյակում երեք անգամ նվազեցրել է տոկոսադրույքը:

Գների ինդեքսների դինամիկա





Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) ըստ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի.

- Գնաճ՝ **-1.2%** (2024 թվականի մարտի համար)
- Աճողական գնաճ՝ **-1.2%** (2024 թվականի հունվար-մարտի համար)

Գծապատկեր 19-ը ցույց է տալիս, որ Հայաստանում սպառողական գների ինդեքսը 2024 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա համեմատ շարունակել է նվազել, ինչը վկայում է շարունակական գնանկման միտման մասին:

Սպառողական գների ինդեքսը ներկայումս ցածր է ՀՀ Կենտրոնական բանկի (ԿԲ) կողմից սահմանված 4% նպատակային ցուցանիշից: Ըստ ԿԲ-ի՝ դա առաջին հերթին պայմանավորված է ապրանքների ներմուծման կրճատմամբ, այդ թվում՝ պարենամթերքի:

Հայաստանում ճյուղային գների ինդեքսների մեծ մասը 2024 թվականի հունվարից մարտ ընկած ժամանակահատվածում մնացել է համեմատաբար կայուն՝ ներմուծման և արտահանման ոլորտներում նկատելի բացառություններով: Այս տատանումները հավանաբար պայմանավորված են առաջին եռամսյակի ընթացքում փոխարժեքի տատանումներով:

- **Ներմուծման գների ինդեքսը** բացասական է եղել ամբողջ 2023 թվականի ընթացքում, սակայն 2024 թվականի առաջին եռամսյակում ցույց է տվել դրական դինամիկա:
- **Արտահանման գների ինդեքսը** դրական է եղել ամբողջ 2023 թվականի ընթացքում, սակայն 2024 թվականի առաջին եռամսյակում զգալի բացասական տեղաշարժ է տեղի ունեցել:

Պետական բյուջե և պարտք

Գծապատկեր 21. Հայաստանի պետական պարտքը
(մլն ԱՄՆ դոլար)



Գծապատկեր 22. ՀՀ բյուջեի եկամուտը և ծախսերը
(մլրդ ՀՀ դրամ)



Հայաստանի պետական պարտքը 2024 թվականի մարտին հասել է 12, 163 միլիոն ԱՄՆ դոլարի, որից՝

Արտաքին պարտք՝ 6,427,8 մլն ԱՄՆ դոլար (**+0.44%՝** 2023 թվականի մարտի համեմատ),
Ներքին պարտք՝ 5,735.2 մլն ԱՄՆ դոլար (**+27.5%՝** 2023 թվականի մարտի համեմատ):
Արտաքին պարտքը բաղկացած է հետևյալ տարրերից՝
Պետական պարտք՝ ընդհանուր արտաքին պարտքի 92%-ը (**+0.91%՝** 2023 թվականի մարտի համեմատ),
Կենտրոնական բանկի պարտք՝ ընդհանուր արտաքին պարտքի 8%-ը (**-4.5%՝** 2023 թվականի մարտի համեմատ):

Հայաստանի բյուջեի եկամուտները 2024 թվականի հունվար-մարտին կազմել են 525.0 մլրդ դրամ (**+8.6%՝** 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ): Աճը պայմանավորված է հարկերի և տուրքերի մուտքերով, որոնք նույն ժամանակահատվածում աճել են շուրջ 8.5%-ով՝ հասնելով 500.6 մլրդ դրամի:

Պետական ծախսերը 2024 թվականի հունվար-մարտին կազմել են 525.9 մլրդ դրամ (**+24.4%՝** 2023 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ), որից՝
Ընթացիկ ծախսեր. ավելացել են 17.0% - ով (բյուջետային ոլորտի աշխատողների աշխատավարձ, ապրանքների և ծառայությունների ձեռքբերում, տոկոսների վճարում, դրամաշնորհներ և այլն)
Ոչ ֆինանսական ակտիվներ. աճել են 2.3 անգամ (ձեռքբերում և այլ գործունեություն):